

**Universitäts- und Landesbibliothek Bonn**

**Orn ê iskakan horomosi vanke**

**T'oramanyan, T'oros**

**Alêksandrapôl, 1911**

**urn:nbn:de:hbz:5:1-164339**

Goussen

3609

*ein solletänd.*

Gönnen 3609



Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ

# ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ

(Հնագիտական ուսումնասիրութիւն)



ԱԼԷՔՍԱՆԴՐՍՊՈԼ

Տպարան Ե. Սահոյեանցի

1911

3609







ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԸ

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

Անիի պատմական յիշատակներով հետաքրքրուողներու համար ոչ նուազ կարևոր է ծանօթանալ, անոր մօտիկ, պատկառելի հնութիւններով հարուստ Հոռոմոսի վանքին, որ չորս բիւթմէթր զէպի արեւելք կը գտնուի և հինգ զանազան դարերու յատուկ հայ-ճարտարագիտական ոճով ու ճաշակով զեղարուեստական ընտիր շէնքեր կանգուն ու կիսականգուն տակաւին պահուած են այնտեղ:

Իմ նպատակս չէ առայժմ նկարագրել կամ ուսումնասիրել անոր ամբողջական անցեալն ու ներկան, անոր նշանակութիւնն ու կատարած զերը՝ մասնաւորապէս Բագրատունեաց հարստութեան ժամանակէն սկսեալ մինչև Անիի անկումը, իր տաճարներով, զպրոցներով, մատենադարաններով և ասպնջականոցներով: Այստեղ պիտի աշխատիմ պարզելու մի անստուգութիւն, որ ըստ իմ կարծեաց խիստ կարևոր է պատմական և բանասիրական տեսակէտով. այսինքրն թէ, զանազան ժամանակ այնտեղ կանգնուած քանի մը եկեղեցիներումէջ, ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը:



Հոռոմոսի վանքին պատկանող սահմանին մէջ, որ կը հասնի մինչև յաղթական կամար համարուած դուռը,<sup>1)</sup> (Դօշէք) թէև մանր մանր մատուռներ 5—6 հատ կան, սակայն իբրև վանական մեծ եկեղեցիներ երեք հատ են, որոնց մին բարձրաւանդակի վրայ ս. Յօհաննէս անունով. իսկ երկուքը հիւսիսակողման ձորին մէջ, մին ս. Գէորգ. և միւսը «կարծի ս. Մինաս»:<sup>2)</sup>

Այս երեք մեծ եկեղեցիներէն զատ ուրիշ մեծ եկեղեցիի հետք ամենեին չկայ. ուստի այս երեք եկեղեցիներուն մէջ պիտի փնտրենք, ըստ պատմագրական աւանդութեան, Յունաստանէն հալածական եկած կրօնաւորներէն մէկուն՝ Յօհաննէս վարդապետի հիմնարկած Հոռոմոսի վանքը<sup>3)</sup> Թ. գ. դարու կէսին մօտ (930—953):

Թերակղզիի բարձրաւանդակին վրայ եղող եկեղեցին ս. Յօհաննէսը, որ շրջապատուած է մատուռներով և սիւնաղարդ տոհմային դամբարաններով, սրեմտեան դրան վրայի արձանագրութեան համաձայն, հիմնարկած է 1038 թիականին Բաղրատունի Յօհաննէս Սմպատ թագաւորի ձեռքով: Իսկ ձորի եկեղեցի-

<sup>1)</sup> Մասնաւոր հետազօտութեամբ գտած են, որ Հոռոմոսի վանքին Ախուրեանի ընթացքով ձևացած թերակղզին նեղ պարանոցով մը սկսած է Դօշէքի գտնուած տեղին վրայ և այդ պարանոցը մի ժամանակ, թերևս վանքի հիմնարկութենէն սլ առաջ, փակուած է հղիւր որձաքարէ շինուած ամուր պարիսպով. Դօշէքը պարիսպէն հազիւ 4—5 մէթր ներսը շինուած է, հաւանականաբար պարիսպը քանդուելէն յետոյ են շինած Դօշէքը:

<sup>2)</sup> Հ. Ա. Վ. Ալիշան, Շիրակ, Վեներակ 1881 երես 29:

<sup>3)</sup> Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան պատմութիւն Տրեգերական, Ս. Պետերբուրգ 1885 երես 174:

Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ. Մոսկուա 1858 երես 47:



ներէն ս. Գէորգը կանգներ է Բաղրատունի թագաւոր  
Գագիկ Ա. իր գահակալութեան շրջանին մէջ (990  
— 1021):

Արդ քանի որ ըստ Ասողիկի վկայութեան, Աբաս  
թագաւորի օրով կանգնուեցաւ Հոռոմոսի վանքը և  
Աբաս մեռած է 953 թուականին,<sup>1)</sup> հետևաբար 953  
թուականէն առաջ կանգնուած էր Հոռոմոսի վանքը,  
որ առ նուազն 35—40 տարի առաջ է, քան ս. Գէորգ  
և 80—85 տարի առաջ, քան ս. Յօհաննէս: Աւրեմն  
այս վերջինները բնաւ չեն կարող իսկական Հոռոմոսի  
վանք համարուիլ:

Կը մնայ կարծեցեալ Ս. Մինաս եկեղեցին, որուն  
շինութեան ճիշտ թուականը թէև յայտնի չէ ունէ  
արձանագրութիւնով, սակայն նախ, ճարտարապետա-  
կան ոճի տեսակէտով անկարելի է անոր շինութիւնը  
Ժ-րդ. դարէն այս կողմ բերել, որովհետև Ժ-րդ. դարու  
հայ ճարտարապետութեան վերածնութեան առաջին  
շրջանը ներկայացնող նմոյշներ ունի տակաւին՝ խա-  
ռըն է-դ դարու հայ ոճի պատկանող դարզարանքնե-  
րով և ուրիշ շինարարական մասերով: Այս մասին  
թէև մասամբ խօսեր եմ, դարձեալ պիտի խօսիմ ա-  
ռանձին յօդուածով: Երկրորդ՝ իր վերայ եղած 986  
թուականի նուիրատուութեան մը արձանագրութե-  
նէն<sup>2)</sup> կերենայ, որ նախքան այդ թուականը կանգուն  
էր այդ կարծեցեալ Ս. Մինաս եկեղեցին:

Ուստի կը մնայ միակ եկեղեցին Հոռոմոսի վա-  
նաց մէջ այս Ս. Մինաս անուանուածը համարելի իբ-  
րև նախնական Հոռոմոսի վանք, Ժ-րդ. դարու կէսին  
Յօհաննէս վարդապետի ձեռքով կանգնուած:

<sup>1)</sup> Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմ. Տիեզի-  
րական. Ս. Պետրբուրգ, 1885 թ. էրես 171—173:

<sup>2)</sup> Հ. Ղ. վ. Ալիշան. Շիրակ, Վենետիկ 1881 էրես 32:



Բայց այս մասին իմ ձեռք բերած ապացույցներս թուելէ առաջ քննենք անդամը, որչափ հաւանական է ոմանց՝ ինչպէս նաև հ. Ալիշանի կարծիքը, թէ այժմեան Ս. Յօհաննէսը կանգնուած լինի նախկին Հոռոմոսի վանքին տեղին վրայ: <sup>1)</sup>

Այս ենթադրութեան առիթ տուած է անշուշտ պատմական մի անցք, այն է 982 թուին Ապլհաճ ամիրայի ձեռքով Հոռոմոսի վանքին այրուիլը: <sup>2)</sup>

Նախ և առաջ իմ կարծիքով Ասողիկի վանք բառով պէտք չէ միանգամայն եկեղեցին հասկանալ. մեր հին լեզուով վանք յաճախ նշանակեր է տուն, բնակարան, սթեան և այլն: <sup>3)</sup> Բացի այս, ամբողջական քարաշէն մի շէնք կրակով չէր կարող այրելի, ըստիս պարզ է որ Ապլհաճ ամիրան շրջակայ բնակութեան յատուկ փայտաշէն շէնքերը ամբողջովին այրեց և եկեղեցին մնաց անվնաս:

Եկեղեցին կանգուն ու անվնաս մնալուն ոչ նուազ ապացույց է 986 թուականի նուիրատուութեան արձա-

<sup>1)</sup> Հ. Դ. Վ. Ալիշան Շիրակ, Վեհաբիկ 1881 երես 19: Այլ զի չէք յիշատակ առաջնոյ շինողին հօր Յօհաննու՞ դարու ևս առաջ, թուի զդատտակերտս նորա զեկեղեցին փոխանակեալ այժմուս, որ Յօհաննու արքային շինած է և անուանատուն իւրում ս. Յօհաննու նուիրեալ: Ի դէպ է կարծել եթէ նախաշէնն այն եկեղեցի խանգարեալ իցէ յամի 982 յԱպլհաճայ Դեմաստիկ պարսիկ ամիրայէ:

<sup>2)</sup> Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողկան, պատմութիւն տիեզերական Ս. Պետրբուրգ 1885 երես 188: Եւ առաքեաց կոչեաց զԱպլհաճայ Դեմաստանի, թոն Սալարին, ամիրայ պարսիկ, որ թէև ընդ նոսա ոչ ժամանեաց, այլ յետոյ եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց...

<sup>3)</sup> Փառտոսի Բիւզանդացոյ պատմութիւն հայոց. Ս. Պետրբուրգ 1883 երես 86: Իբրև պատահեաց այնմ, էջ սոփեստէս և իւր վոնս ունէր ի ներքս ի վկայանոցի անդ, իսկ մաղխատրանոսքն ունէին վանս իւրեանց ի քաղաքին:



նագրութիւնը որ Ապրիլ 1856 ամի րայի այրելէն չորս տա-  
րի յետոյ է, նոյն իսկ Աստղիկի «Մինչև ցայսօր երևի  
նոյն նշան ողորմածութեան ի տան յայնմ»<sup>1)</sup>  
խօսքէն ալ կերևի որ շուտով վերաշինուած էին բը-  
նակարանները և գործունեայ կեանքը կը շարունակէր  
վանքին մէջ: Եւ որովհետև Աստղիկ իր պատմութեան  
ընթացքը վերջացուցած է 1004 թուականով, հետևա-  
բար այդ ժամանակ ս. Յօհաննէս եկեղեցին արդէն  
գոյութիւն չունէր, իսկ ս. Գէորգի մասին ալ քիչ յե-  
տոյ պիտի տեսնենք, որ 1013 թուականէն առաջ  
կանգնուած լինելը երբէք հաւանական չէ:

Ուրիմն դարձեալ կը մնայ միայն կարծեցեալ ս.  
Մինասը, որուն շուրջը պէտք է կատարել ամեն հե-  
տադատութիւն:

Հոռոմոսի վանքին մէջ եղած բոլոր արձանա-  
գրութիւններէն մի բան շատ պարզ կը հասկացուի,  
որ այնտեղ կանգնուած եկեղեցիներ ամենն ալ ա-  
ռանձին անուններ ունեցեր են, իսկ հաւաքաբար, ի  
յիշատակ սկզբնական հիմնարկութեան Հոռոմոսի  
վանքեր անուանուեր են: Ինչպէս կերևի բացի ընդ-  
հանուր սեփականութենէ, ունեցեր են նաև առանձին  
սեփականութիւններ ալ. որովհետև նուիրատուներ,  
միաբանողներ եթէ ընդհանուր վանքերու անունով  
չեն ըրած իրենց բարեգործական գոհաբերութիւնը,  
այն ատեն մասնաւորապէս շեշտած են այն եկեղեցիի  
անունը՝ որուն նուիրած են կամ միաբանած:

Այս տեսակէտով նախ քննենք ս. Յօհաննէսի  
վրայ եղած արձանագրութիւնները, որոնց մէջ կը  
տեսնենք թէ այն նուէրները որոնք միմիայն ս. Յօ-

<sup>1)</sup> Ստեփաննոսի Տարօնեցոյ Աստղիկան պատմ. Տիե-  
զերական Ս. Պետերբուրգ 1885 երես 174:



հաննէսին կը վերաբերէին, պարպապէս ս. Յօհաննէսի անունը միայն գրուած են, իսկ բացառաբար ինն արձանագրութիւն, որոնց մէջ յիշուած են Հռոմոսի անունը, եթէ նուէրը միայն ս. Յօհաննէսին կը պատկանէր, դարձեալ որոշած են. եթէ ոչ կը վերաբերէր ամբողջ հիմնարկութեան:

Այստեղ պիտի ներկայացնեմ ս. Յօհաննէսի ինն արձանագրութեան մասերը միայն, որոնց մէջ յիշուած է Հռոմոսի անունը:<sup>1)</sup>

1) «Ի նՁէ թուականիս հայոց ետու ես «Յովաննէս Չահանշահ որդի Գաղկոյ Չահանշահի «զիմ այդին որ ի Կողբ յիմ եկեղեցիս ի սուրբ «Յովաննէս զոր շինեցի ի վանսս Հռոմոսի...» Այստեղ արձանագրողը կը պարզէ, որ թէև եկեղեցին շինած է Հռոմոսի վանքերու մէջ, սակայն նուէրը կը պատկանի միայն ս. Յօհաննէսին:

2) «Ի ՈՒԳ. թուիս հայոց... տուար զմեր հայ- «րենի այդին որ ի Փարպի որ կոչի Խանիկշտէ «ի սուրբ եկեղեցիքս Հռոմոսի Վանաց...» Այս արձանագրութեան մէջ պարտաւորիչ էր Հռոմոսի անունը, որովհետև նուէրը կը պատկանի բոլոր եկեղեցիներուն:

3) «Ի ՈՒԷ. թուիս ես հայր Մխիթար սա- «տարութեամբ Սարգսի կրանաւորի ...ամաք «զջուրս ի Հռոմոսի վանքս...» Չատ պարզ է որ ջուրը ամբողջ հիմնարկութեան օգտին էր բերուած, հետևապէս պարտաւորիչ հաւաքական Հռոմոս անուան յըշատակութիւնը

<sup>1)</sup> Արձանագրութիւններու մասին իմ միակ աղբիւրս է-Ն.Ղ.Վ. Ալիշանի «Շիրակ» երկասիրութիւնը. աւելի մանրամասնութեան ցանկացողներ, թող բարեհաճին ղիմել նոյն երկասիրութեան:



4) «Ի ՌԾԵ. Թւիս Զարարիա Չահանչահ որ-  
«դի Սարգսի գաւրապետ հայոց եւ վրաց քակե-  
«ցի զջաղացն որ Էկանցս հակառակ ջրիս շինած  
«էր եւ վերստին հաստատեցի զջուրս ի վանքս  
«Հոռոմոսի...»

Այս արձանագրութիւնն ալ գրեթէ նախնթացին  
բովանդակութիւնը ունի և կը վերաբերի ամբողջ հաս-  
տատութեան:

5) «Ի ՌԾ. Թւիս Ընորհին Աստուծոյ եւ  
«Գրիգոր որդի Հասանայ որդւոյ իշխանին ետուղիս  
«Քանձազին գիւղն... ի տիեզերահռչակ վանքս...  
«պարտական են սպասուորք Հոռոմոսի վանացս  
«մինչ ի զալուստն Քրիստոսի յամենայն ամի Ա.  
«Խ. պատարագ առնել...»

Մասնաւոր եկեղեցիի անուն չի գտնուելէն կը  
հասկցուի որ նուիրատուութիւնը եղած է ամբողջ հաս-  
տատութեան անունով:

6) «Ի ԹԼ. ՈՂԷ Կամաւ ամենակալին Աս-  
«տուծոյ այս մեր գիր յիշատակի է Հէճուպ Գրի-  
«գորոյ որդւոյ Հասանայ եւ եղբայրորդեաց իմոց  
«տերանց սուրբ ուխտիս վանացս Հոռոմոսի որ  
«հաստատեցար արձանագրով. պատրոն ով լինի  
«այս տեղւոյս ի յարանց կամ ի կանսնց ով կա-  
«ջառաւք հայր դնէ այնպիսին նզովս առցէ...»

Արձանագրութիւնը կը վերաբերի ընդհանուր հաս-  
տատութեան ներքին վարչութեան և մատակարարու-  
թեան, ուստի բնական էր որ հաւաքական Հոռոմոս  
անունով յիշատակուէր:

7) «ԹԼ. ՈՂԳ. Ընորհին Քրիստոսի եւ  
«Զմբուխտ խաթունս աղախին Քրիստոսի... և  
«տու ի սուրբ ուխտս ի վանքս Հոռոմոսի ի սուրբ  
«Յօհաննէս ակն մի ջաղաց»:



Այս արձանագրութեան մէջ թիւրիմացութեան տեղի չի տալու համար, մասնաւորապէս կըշեշտէ ս. Յօհաննէսի տնունը Հոռոմոսի վանքերուն մէջ, և միմիայն ս. Յօհաննէսի սպասաւորներուն պարտք կը դնէ պատարագի:

8) «Խ. Թ. ՈՂԹ. Կամաւն Աստուծոյ ես Աւետիս վարդապետ . . միաբանեցայ սուրբ ուխտիս Հոռոմոսի վանաց ս. Յօհաննէսի...»

Այս ալ նախնթացին պէս կորոշէ, որ Հոռոմոսի վանքերէն միայն ս. Յօհաննէսին միաբանած է:

9) «ՈՂԸ. Զնորհիւն Քրիստոսի ես Վաչէ որդի Սարգսի և ամուսին իմ Մամախաթուն զուստորը Ապուսեհրին շինեցաք զնշխարատունս «ի վանքս Հոռոմոսի... և փոխարէն հատուցին մեզ միաբանքս յամէն ամի յամինայն եկեղեցիքս «ի նոր կիւրակէին պատարագիլ գՔրիստոս...»

Այս զոհարերութիւնն ալ եղած է ընդհանուր վանական հաստատութեան անունով, որուն համար բոլոր եկեղեցիները յանձն առեր են ամեն տարի պատարագիլ նուիրատուի յիշատակին:

Վերջապէս դեռ կան ուրիշ արձանագրութիւններ ալ, որոնց մէջ ոչ Հոռոմոս է յիշուած և ոչ ալ սուրբ Յօհաննէս, սակայն բովանդակութիւնէն յայտնի է որ նուէրը տրուած է ընդհանուր ուխտին անունով:

Մինչև ամենավերջին արձանագրութիւնը որ կը հասնի 1336 թուականը, բոլոր արձանագրութիւններուն մէջ որոշ է եկեղեցիներուն հաւաքաբար Հոռոմոսի վանքեր անուանուիլը ամենանախնական հիմնարկութեան յիշատակով, և իւրաքանչիւր յետնագոյն շինութեան առանձին անուան անշփոթ գործածուիլը: Այս 1336 թուականէն յետոյ 349



տարի վանքին վիճակը անստոյգ է, եթէ քոյրոր-  
վին ամայացած չէր, գոնէ անտերունչ վիճակի  
մասնուած էր մինչև 1685 թուականը, յորում Դա-  
նիէլ վարդապետ նորոգեր և վերստին շէնցուցեր է:  
Ահա այս 349 տարի անտէրութեան մէջ մոռցուեր և  
շփոթուեր է ս. Յօհաննէսի սեփական անունը Հոռո-  
մոսի անուան հետ. այդ պատճառով ալ Դանիէլ վար-  
դապետ նորոգելով միմիայն ս. Յօհաննէսի տաճարը  
և շրջակայ բնակարանները պարզապէս անուաներ է զայն  
Մեծ ասքանչ Հոռոմոսի վանք, և այդ շփոթու-  
թիւնը շարունակուած է մինչև այսօր:

Ս. Գէորգ եկեղեցիին վրայ կայ ընդամենը չորս  
արձանադրութիւն, որոնց առաջինը կը վերաբերի շի-  
նողին Գաղիկ Ա.ի, եկեղեցին անուանուած է պարզ  
ս Գէորգ:

Երկրորդ արձանադրութիւնը Յօհաննէս Սմայատ  
թագաւորինն է, որ իր ս. Յօհաննէս եկեղեցին շինե-  
լէն երկու տարի առաջ, մի գիւղ նուիրեր է Հոռոմոսի  
վանքերուն, և այդ ժամանակ որովհետև երկու եկե-  
ղեցի միայն կար ս. Գէորգն ու կարծեցեալ ս. Մի-  
նասը, ուստի շփոթութեան տեղի չի տալու համար  
յատկապէս կը շիշտէ արձանադրութեան մէջ թէ, ար-  
ձանագրած է ս. Գէորգի վրայ ոչ թէ Հոռոմոսի,  
Ահաւասիկ արձանադրութեան կարևոր մասերը:

«ՆՁն Թա. Հ. Կս Սմայատ Չահանշահ որդի Գաղկայ  
«ետու զիմ գեղս զՍահառունիս ի մեր հանգստա-  
«րանս թագաւորաց ի տիեզերահռչակ վանսս  
«Հոռոմոսի... ևւ գրեցի ի սուրբ Գորգ...»<sup>1)</sup>

<sup>1)</sup> Արձանադրութիւնը փորագրողին կողմանէ եղած տա-  
ռասխալ է Գորգ գրուելը. է տառը մոռացուած է. շարունա-  
կութեան մէջ մի ուրիշ տեղ ամբողջ գրուած է Գէորգ:



Երբորդը՝ արձանագրած է Անանիա Արշարունեաց  
եպիսկոպոս, որուն բովանդակութիւնը ըստ բաւականի  
նշանակալից է:

«Աստուած է ի սմա. Չնորհին Աստուծոյ ես  
«Տէր Անանիա Չնորհին Աստուծոյ Արշարունեաց  
«Եւ ձակատոց զաւառի եպիսկոպոս զմտաւ ա-  
«ժեալ հանապազ զվանս սրբոյն Յոհաննու թէ  
«մեծ շահ է յԱստուածային խորհուրդոն յիշել  
«զգնացեալսն. կարգեցի ամ ըստ ամէ անխափան  
«զգատկի միռելոց յաւուրս (ժ.) ամն յամենայն  
«եկեղեցիս յանուն տաճնորդաց հարցն սրբոց  
«եկեղեցւոյս կատարել եւ զայլ աւուրսն մինչև  
«ցնոր կիւրակէն ամենայն հանգուցելոց որ են  
«ի սուրբ ուխտիս...»

Այս արձանագրութեան մէջ սրբոյն Յոհաննու  
խօսքը կը վերաբերի վանքի հիմնադիր Յոհաննէս  
վարդապետին, Անանիա եպիսկոպոս պարտականու-  
թիւն է զգացեր, թէ հիմնադիր սուրբ Յոհաննէսի և  
թէ անոր գործը շարունակող հարցն սրբոց յի-  
շատակին համար ամեն տարի վանքի բոլոր եկեղե-  
ցիներու մէջ պատարագել:՝)

Չորրորդ արձանագրութիւնը մի նուիրատուի կը  
վերաբերի Մարտիրոս անունով որ «Կուղպակը տուեր է  
«ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի և արձանա-  
«գրեր է «ի սուրբ Գէորգ»:

Ս. Մինաս կարծուածը ունի միայն երկու ար-  
ձանագրութիւն որոնցմէ մէկը գրուած է (ՆԼԵ) 986

՝) Հայր Ալիշանի Շիրակ երկասիրութեան մէջ պատկ.  
7. ս Գէորգ - հանգստաշան Գագկայ Ա. պատկերը, Անիի  
մեջ Ախուրեանի ձորին վրայ կուսանաց վանք (?) անուան-  
ուած մատուռին պատկերն է, սակայն Հոռոմոսի ս. Գէորգ  
եկեղեցիին արևելեան հիւսիսային կողմը քանի մը մէթը



Թուականին, ինչպէս վերև տեսանք, երբ դեռ այսօր-  
ուան գտնուած եկեղեցիներէն և մատուռներէն ոչ մէ-  
կը գոյութիւն չունէին: Ահա այդ ժամանակուան ար-  
ձանագրութեան մէջ առանց այլևայլութեան բնորոշ  
կերպով Հոռոմոսի վանք անուանուած է եկեղեցին:  
Ահաւասիկ արձանագրութեան սկիզբը.

«Յանուն Աստուծոյ ի ՆԼԵ Թուականիս հայոց  
«ետու ես Չուտասչիմ հայրենի աշգին զհոռոմգեանն  
«որ ի Մրեան ի Հոռոմոսի վանս ի հայր Սողոմոն  
«վասն իմ ծնողաց հոգեաց...»

Այս արձանագրութիւնը մեզ շատ աւելի կը մօ-  
տեցնէ ճշմարտութեան. բանի որ Հոռոմոսի վանքի  
տմբողջ սահմանին մէջ վանական եկեղեցի համարուե-  
լու չափ մեծութիւն և զիրք ունեցող ոչ մի փլատակ  
կամ աւերակ բոլորովին չիկայ, որուն մասին կաս-  
կած տանէինք. այսօրուան մեր կանգուն կամ կիսա-  
հետադուրեթեան վրայ կայ ճիշտ նոյնանման յատակագծով, քիչ մ  
ալ աւելի մեծկակ մատուռի մը մնացորդ: Գիւղացիներու  
պատմելով 30—35 տարի առաջ մի քուրդ ընտանիք կը բնա-  
կէր անոր մէջ. այդ ընտանիքի մէկնիկէն մէկ օր յետոյ  
հիմնիվէր կործանէր է յանկարծակի: Երևի հայր Ալիշան Անիի  
կոնսանաց վանքի յատագծին ու պատկերին հետ միաժամա-  
նակ ձեռքի տակ ունեցեր է նաև Հոռոմոսի վանքի այս  
մատուռին ալ յատակագիծը, անշուշտ նաև տեղեկութիւն ա-  
նոր Գաղիկ Ա. ի համար իբրև շիրիմ կանգնուած լինելուն.  
այս երկու մատուռներու յատակագծերու մօտաւոր նմա-  
նութիւնէն շիտթուելով հայր Ալիշան մէկը միւսին տեղ զրերէ:

Անանիա Եպիսկոպոսի վանահայրութեան ժամանակ՝ որ  
Գաղիկ Ա. արդէն մեռած էր և Ս. Գէորգի արձանագրութեան  
համեմատ ալ պէտք էր որ այնտեղ թաղուած լինէր, հետևա-  
բար պէտք է որ կանգուն լինէր այս մատուռը, ուստի Անա-  
նիա Եպիսկոպոսի արձանագրութեան մէջ յ ա մ ե ն ա յ ն  
ե կ ե ղ ե ց ի ս ը ս ի կ ա կ ն ա ր կ է և այս մատուռը և թերևս  
մի ուրիշն ալ որ հիւսիս արևելեան լանջին վրայ է կղած  
և այժմ բեկորները միայն մնացած են.



կանգուն տեսածներս ալ տասնհակ տարիներ յետոյ են կանգնուած, և որ աւելին է՝ երբ ինքը միայնակ եղած ժամանակ ալ պարզ Հռոմուսի վանք անունը միայն ունի. հետեաբար անկասկած այս պէտք է լինի ժոզարու կէսին Յօհաննէս վարդապետի հիմնարկած առաջին վանքը:

Երկրորդ արձանագրութիւնը գրողն ալ դարձեալ Անանիա եպիսկոպոսն է (ինչի՞նչ) 1013 թուականին: Այս արձանագրութեան մէջ թէև եկեղեցի անունը բնաւ չէ յիշուած, սակայն բովանդակութենէն կերևի որ այդ թուականին ալ այդտեղ ուրիշ եկեղեցի չի կար. Գաղիկ թագաւորն ալ դեռ ողջ էր, հետեաբար, ըստ հ. Ալիշանի՝ հանդտտարան Գաղկայ Ս. ալ գոյութիւն չէր կարող ունենալ: Ահաւասիկ արձանագրութիւնը:

Յանուն Աստուծոյ. ինչի՞նչ թուականիս ես տէր Անանիա յետին վերակացուս եկեղեցոյ առաջնորդ գորով սուրբ ուխտիս . . . , ազատեցի մեծաւ ջանիւ զհարկ և զթասգակ և տուի զՔեղարագոմն իւր ամենայն գոյիւ ի սուրբ ուխտս վասն ապաւենի տեղի լինելոյ ի փախստեան ժամանակի, . . . Եւ տուող այդմ պարգևի Գաղիկ էր արհնեալ յաստուծոյ և որդեակը իւր Սմպատ և Աբաս և Աշոտ. . .

Եթէ այս նուիրատութեան ժամանակ ուրիշ եկեղեցի կենար, անպայման պէտք էր որ Անանիա եպիսկոպոս ինքզինքը անուանէր *վերակացուս վանացս կամ եկեղեցեացս* ոչ թէ եզակի բառով «վերակացուս եկեղեցոյ»: Նաև չէ զրուած յամենայն *եկեղեցիս* խօսքը հակառակ թագաւորական սերունդի մը համար որոշուած պատարագներուն. մինչդեռ Անանիա եպիսկոպոսի միւս արձանագրութեան մէջ շեշտուած է յամենայն *եկեղեցիս* խօսքը:



Անանիա եպիսկոպոսի երկու արձանագրութիւններուն բաղդատութիւնով կը տեսնենք, որ Ս. Գէորգը թէև դարձեալ Անանիա եպիսկոպոսի վանահայրութեան օրով է շինուած, սակայն 1013 թուականէն շատ յետոյ:

Մինչև այստեղ մէջ բերուած փաստերէն զատ, մի անվիճելի ապացոյց ևս կայ, որ ոչ մի կասկած չի թողնուր հաւատալու, թէ Հոռոմոսի վանքը ոչ թէ Ս. Յօհաննէսի տեղին վրայ էր, այլ ցածր ձորին մէջ՝ ուր կը գտնուին այժմ կարծեցեալ Ս. Մինասն ու Ս. Գէորգը:

Այս ապացոյցը կը գտնենք դարձեալ հայր Ալիշանի «Ջիրակ» երկասիրութեան մէջ. այն է ժԱ. ժԲ. դարերէն մեզ հասած մի տեղագրական նկարագրութիւն Հոռոմոսի վանքին: Այս տեղագրութեան աղբիւրըն է Գետարգել Ս. Նշանի պատմութիւնը, որուն մէկ հատուածը բաղած է բազմավաստակ հեղինակը, որ հետեւեալն է:

«Ի միջոց ժամանակի ժԱ. դարու ցշորրորդ քառորդ ժԲ-ին, յորում ոչ առաջնորդը յիշին վանացն և ոչ մի արձան յիշատակի գրեալ, հանդիպեալ են հրաշալի այլայլութիւնք սահմանաց զրից վանացն և պատողին զնովաւ Ախուրեան գետոյ, կարևոր տեղագրութեամբ, ըստ պատմութեան Գետարգել խաչին զոր պահէր հայրն Ատոմ ի Խաւարածոր Արշարունեաց, Ուստի անցեալ Ջիրակ, յՄնի, ադա եկն այսր ի Հոռոմոց վանքն. «Եւ էր վանքն այն (ասէ պատմիչն) «Ի խորուձոր ի վերայ բլրի միում, զորով շուրջ բակ շառեալ պատէր մեծ գետն Ախուրեան և գետն այն «բազում ցաւս և վտանգս հասուցանէր վանացն, զի շյորժամ արեգակն ամառնային տեղին հասանէր՝ շո-«գեալ շողանայր վանքն ի տապոյ արևուն. իջանէր «ի քարանձաւսն, և օդը խորշակայինք և զազրահոտք «և ցաւաբերք ի գետոյ անտի փչէր ի չորից կողմանց: Ով որ Հոռոմոսի վանքը և մասնաւորապէս ձորի



մէջի եկեղեցիներու դիրքը անձամբ տեսած ու քննած է, անոնց համար աւելորդ իսկ է կրկին բացատրել, թէ ի՞նչ աստիճան ճիշտ նկարագրութիւն է Ս. Մինասի և Ս. Գէորգի տեղին ու դիրքին, Գետարդել Ս. Նշանի տեղագրութիւնը։ Սակայն դարձեալ աւելորդ չեմ համարեր քանի մը խօսքով նկարագրել և համեմատել հնադարեան նկարագրութիւնը հիմնական դիրքին հետ։

Յօճաննէս Սմայատ թագաւորի շինած Ս. Յօճաննէս եկեղեցին ամենևին ի խորունոր տեղի վրայ չէ, ընդհակառակը այնպիսի բարձրաւանդակի վրայ է որ պարզ օդի ժամանակ, մինչև իսկ Անիի պարիսպներուն մէջէն կարելի է տեսնել ամբողջութեամբ, Ախուրեան գետը հիւսիսային կողմը միայն քերելով կանցնի 30—40 մէթր խորութեամբ, և մօտաւորապէս կէս քիլօմէթր ղէպի արևմուտք հեռանալէն յետոյ կը ծռուի հիւսիս. զրեթէ մէկ քիլօմէթր ալ ղէպի հիւսիս ուղիղ հոսելէն յետոյ, կրկին կ'ծռուի ղէպի արևմուտք, կամ ղէպի Անի։ Ի հնումն, անշուշտ Գետարդել Ս. Նշանի պատմագրին ակնարկած ժամանակէն առաջ, գետը երկու ճիւղի բաժանւած է եղեր ղէպի Անի ծռուած տեղէն աւելի քան 200 մէթր վերէն։ Բաժնուած մէկ ճիւղը դարձեր է կրկին ղէպի արևելք, և քերելով Ս. Յօճաննէսի բարձրաւանդակի խորունոր փէշերը, հասեր է մինչև ղօշէքի բարձրութեան ստորոտները, այնտեղ ալ կիսաբոլորակ աղեղ մը կազմելով, ուղղուեր է դարձեալ ղէպի արևմուտք և հասնելով մինչև հանրային ջրի աւազանին մօտ խառնուեր է դարձեալ մայր ճիւղին։ Ահա այս մէկ ճիւղի պտոյտով ձևացած է ձուածե բլրանման կղզի մը, որուն ամենէն բարձր տեղին վրայ կանգնուած են կտրձեցեալ ս. Մինասն ու ս. Գէորգ եկեղեցիները։ Այս կղզիին բարձրութիւնը եթէ համեմատենք անմիջապէս շրջակային հետ, կը տեսնենք որ տեղտեղ մինչև 40—50 մէթր խորութեամբ փոսի մէջ է կղզին։ Այս փոսին համար էր որ մի իտալացի հանրային ճարտարագէտ 1903 թուականէն կարծիք յայտնեց, թէ հրաբուդիս բերան եղած է մի ժամանակ այդ փոսը։



Խորուձորի արևելեան և հարաւային լանջերուն վրայ մինչև այսօր մնացած կան պատմիչին տկարկած քարանձաւներէն մէկ քանին. իսկ ջրին նախկին հունը ոչ միայն մինչև այժմ մնացած է, այլև Ախուրեանի ջուրը յորդած ժամանակ, պատմական ճիւղը գարձնալ բաժանուելով դետէն հին ուղղութեամբ կը հոսի և կզգի մը կը վերածէ ձորի բարձրաւանդակ բլուրը: Իսկ ամառ ժամանակ գրեթէ միշտ ճախճախուտ և խոնաւ, որուն պատճառաւ գիւղի բնակչութեան մշտական հիւանդութիւն դարձած է ջերմը և ուրիշ գանազան տենդեր:

Քացի քարանձաւներէն կան նաև բնակութեանց շատ մնացորդներ, աբեղեան կողմը կայ ընդարձակ գերեզմանատուն, որուն մէջ կը գտնուին մամուպատ ապականաբարեր, ոմանց վրայ արձանագրուած: Ըստ սրտ է մի փողոց, որով վանքերը և գերեզմանատունը իրարմէ կանջատին, իւրաքանչիւրին իրեն համար շինուած պարիսպներով:

Չորը կամ դէպի վանքերը իջնելու նախնական ճանապարհը եղեր է Դօշէրի մօտէն, հազիւ 30—40 քայլ անցնելով Դօշէրէն յայտնի կը տեսնուի ճանապարհի մը դէպի աջ ծռուիլը. թէև այժմ վրած և անգործածելի, սակայն հին ձեռագործ յարդարման գործողութեանց հետքերը շատ սրտ էն հիւսիսային լանջի վրայ: Կէս ճանապարհին, դեռ մինչև խորը չիջած, բլրածև ժայռի մը վրայ շինուած մատուռի մը<sup>1)</sup> մօտէն ճանապարհը երկուքի բաժանուած է, որուն մէկ ճիւղը դէպի վանքերը, իսկ միւս ճիւղը հորիզոնաբար յառաջանալով, հիւսիսակողման լանջին վրայէն կը հասնի մինչև հանքային ջրի աւազանը գետափի մօտ:

Տեսնելով այս բոլոր պատմական և իրական ապացոյցները և ներկայացնելով ընթերցողներու ազատ քննադատութեան, ես ինքս միանգամայն համոզուած եմ, որ մեր մինչև այսօր աւանդաբար ս. Մինաս կարծած եկեղեցին է իսկական Հոռոմոսի

<sup>1)</sup> Այս մատուռին վրատակներն ու քանի մը խաչքարերու կտորները մնացեր են բլուրին ներքև թափուած:



վանքը, Ժ-դ. դարու կէսին Յօհաննէս վարդապետի ձեռքով հիմնարկուած:

Թէ ինչո՞ւ համար Հոռոմոսի վանքը խորուձորի միջի բլուրին վրայ են շիներ և ոչ բարձրաւանդակին վրայ, սլատճաւը սլարզ կերևայ մէջ բերածս Յ. դ արձանագրութեան ամբողջական բովանդակութեան մէջ: Զորի կարիքը ստիպեր է հիմնադրին ընտրել այն տեղ գետի եզերքին. վասնզի այն ժամանակ վերը բարձրաւանդակին վրայ ջուր չիկայ եղեր, հետևաբար շատ դժուար էր տարուան ամեն հղանակին մէջ ձորէն ջուր մատակարարել:

Բազրատունի թագաւորներ, հաւանականաբար վանքը արքայական դամբարանի վերածելու մտադրուած օրերնէն, շատ աշխատեր են բարձրաւանդակին վրայ ջուր բերել և այնտեղ շէնցընել, սակայն չեն յաջողեր: Ըստ երևոյթին Յօհաննէս թագաւորը աւելի յոյս ունեցեր է յաջողելու, այդ պատճառով ալ իր եկեկեցին հիմնադրեր է բարձրաւանդակին վրայ, թէև դարձեալ ապարդիւն անցիր են անոր ալ ջանքերը: Առաջին անգամ ջուրը բերուեր է Հայր Մխիթարի ջանքերով 1198 թուականին, որն որ իր արձանագրութեան մէջ կրօէ թէ «Ջականց ջուրն զոր մեր հին «Թագաւորացն յոյժ ջանացեալ և ոչ ժամանեցին «բերել մեծ ծախիւր և աշխատութեամբ ածար «զջուրս ի Հոռոմոսի վանքս»...»

Իսկապէս ալ մեծ ծախք և զոհողութիւն կը պահանջէր այնքան հեռաւորութենէ ջուր բերելը: Զրանցքի մնացորդներու ուղղութիւնը կարծել կուտայ, որ Քէտէլլէրի վտակը բերեր են վանքը: Առնուազն 25 – 30 քիլօմէթր ջրի ճանապարհը շինելէն յետոյ, Դօշէքի մօտ խոր փոսի մը վրայէն ջուրը անցնելու համար մի երկար կամուրջ ալ շիներ են որուն մնացորդները կերևան հիմայ ալ: Յգտուելով ջրի առատութենէն, թերակղզիի ամբողջ բարձունքը այգիներու և մրգատաններու են վերածեր, որոնց բաժանմունքները և սահմանները դեռ չեն կորած:

<sup>1)</sup> Հ. Դ. Վ. Ալիշան, Շիրակ, Վեհեստիկ 1881 երես 21:



Bucheinband von  
JOSEF ERDMANN  
BO. W. Ds. 111



